

ՀՈՒՆԴԱՐԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ  
XIX Դ. ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XX Դ. ՍԿՋՐՆԵՐԻՆ

ԷՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վաճառական տվյալները հաստատում են, որ Հունգարիայի տարածքում հայեր ապրել են դեռևս հունգարական պետականության սկզբնավորման շրջանից<sup>1</sup>, բայց հունգարահայության պատմությունն սկսվում է 1672 թ., երբ հայերի հոծ զանգվածներ այստեղ փոխադրվեցին մասնավորապես Մուլդովայից: Առիթր մոլդովական ապստամբության պարտությունն էր (1669) և թուրքերի վրեժխնդրության վտանգը, որից փրկվելու համար 3000 հայ ընտանիք անցավ Կարպատներն ու ապաստան խնդրեց Տրանսիլվանիայի իշխան Միհայ Ասպիից: Հայերի մեծ մասը հաստատվեց Դյերգյոսենտմիկոշ (այժմ՝ Գեորգեն) և Ջիկսեպլիզ (այժմ՝ Ֆրումոսա) բնակավայրերում (ներանցից շատերը հետագայում վերաբնակվեցին Տրանսիլվանիայի այլ մասերում): Տրանսիլվանահայերի հոգևոր կենտրոնը կամ, այսպես կոչված, հայկական եպիսկոպոսությունը հաստատվեց Բեստերցե (այժմ՝ Բիստրիցա) քաղաքում:

Տրանսիլվանիայի հայությունը շուտով հարկադրված եղավ օրհասական կոճիվ մղել հանուն իր դավանանքի պահպանության: Արդեն XVII դ. վերջերին Վատիկանի նվիրակ, հայազգի Օգսենտիուս Վերզարը (Օքսենտ Վրզարյան) սկսեց նրանց կաթոլիկացնել, որը մեծապես հարվածեց հունգարահայության ազգային ինքնությունության՝ պահպանմանը, թեև, ինչպես ցույց է տվել Ս. Քոլանջյանը, Օ. Վրզարյանն ի վիճակի չեղավ ավարտելու սկսած գործը, և հունգարահայերը դեռ երկար ժամանակ պայքարում էին կաթոլիկ եկեղեցու և լատինամոլության դեմ<sup>2</sup>: Նույնիսկ XVIII դ. վերջերին Տրանսիլվանիայում կային բավականաչափ լուսավորչական հայեր: Օ. Վրզարյանի նախաձեռնությամբ հայերը հողեր են գնում Գեոլա կոչվող ամրոցի մոտ, Սամոշ գետի ափին և մինչև 1713 թ. կառուցում են քաղաք, որը սկզբում կոչվում էր էրմենվարոշ (Örményváros, Արմենոպոլ, Հայաքաղաք), փսկ XVIII դ. կեսերից՝ Սամոշուվար (նոր բերդ Սամոշի ափին): Չնայած հնարավոր չեղավ այստեղ հավաքել Տրանսիլվանիայի բոլոր հայերին, այնուամենայնիվ, Սամոշուվարը բարգավաճեց ու դարձավ հունգարահայության կենտրոն և այդպիսին էլ մնաց մինչև գաղթօջախի մայրամուտը:

Հայերը, որոնց հիմնական զբաղմունքը արհեստներն ու առևտուրն էին, Տրանսիլվանիայի իշխաններից, Ավստրիայի և ասլա Ավստրո-հունգարական

<sup>1</sup> Մինչև XVIII դ. վերջերը հունգարահայության պատմությունը տե՛ս Ս. Քոլանջյան, Գեոլա հայաքաղաքը և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն (բանբեր Մատենադարանի, № 6, էջ 499—531) և R'ethy László, A magyar örmények („Armenia“, 1830, № 5, o. 129—134).

<sup>2</sup> Շ. Օ. Կոլանձյան, Армяне в Трансильвании X—XVIII вв. (автореферат кандидатской диссертации), Ереван, 1965.

կայսրության միապետներից ստացան զանազան արտոնություններ: Լեոպոլդ I-ը հայկական բնակավայրերը հայտարարեց քաղաքներ, իսկ Իոսիֆ II-ը՝ Սամոշովարին 1726 թ. և Եղիսաբեթուպոլսին (այժմ՝ Դումբրըվեն) 1738 թ. տվեց թագավորական ազատ քաղաքների իրավունք: Արդեն 1725 թ. հայկական բնակավայրերի պատգամավորները հրավիրվեցին Կոլոժվարի (այժմ՝ Կուլժ) պետական ժողովին, իսկ 1791 թ. Հունգարիայի պետական ժողովը հայերին պաշտոնապես հայտարարեց երկրի լիքրավ քաղաքացիներ:

Հունգարահայության ուժացումը, որ տեղի ունեցավ մի քանի սերնդի աշքի առջև, միանգամայն օրինաչափ և անխուսափելի երևույթ էր: Հունգարահայ գաղթօջախը համեմատաբար փոքրաթիվ էր: 1892 թ. տվյալներով՝ հունգարահայերը մոտավորապես 15000 հոգի էին: Կտրվածությունը մայր երկրից և կաթոլիկական միջավայրը նույնպես իրենց բացասական դերն էին խաղում: Բայց ամենագլխավոր պատճառը, որի հետևանքով հայերը միաձուլվեցին հունգարացիների հետ, թաքնված էր նրանց սոցիալ-տնտեսական պայմանների մեջ:

XIX դ., երբ Հունգարիայում արդեն հասունացել էր ֆեոդալիզմի ճգնաժամը և սուր կերպով զգացվում էր բուրժուական վերափոխումների անհրաժեշտությունը, երկրում ապրող ազգություններից գլխավորապես հունգարներն էին, որ հանդես էին գալիս իբրև հասարակական նոր կարգերի ամենաուժեղ ու ամենահետևողական կողմնակիցներ: Մյուսների տիրապետող դասակարգերը հիմնականում կազմված էին խոշոր հողատերերից և ձգտում էին պահպանել ավատական կացութաձևը: Հունգար ավատների նման նրանք ևս այդ նպատակի համար օգտագործում էին այն ազգային հակասությունները, որ գոյություն ունեին հունգար և ոչ հունգար ժողովուրդների միջև հատկապես XIX դ.: Բայց հունգարների ու հայերի միջև այսպիսի հակասություններ չկային: Հայերը, որոնք զբաղվում էին բացառապես արհեստներով և առևտրով, ընդհակառակը, շահագրգռված էին կապիտալիզմի արագ զարգացմամբ:

Ավստրիայի և Հունգարիայի միջև 1867 թ. կնքված Կոմպրոմիսի օրենքը մեծապես նպաստեց երկրի տնտեսական ու մշակութային կյանքի բուռն զարգացմանը, որի հետևանքով շարունակվեց հայերի վերաբնակումը Հունգարիայի ու Տրանսիլվանիայի այլ մասերում: Ավելի ու ավելի շատ հայեր սկսեցին ձգտել դեպի Բուդապեշտ ու երկրի մյուս խոշոր քաղաքները, որի հետևանքով հայկական բնակավայրերի դեմքը աստիճանաբար սկսեց փոխվել: Նախկին ազգային համախմբվածությունը վերանում էր, հեռացած հայերի տեղը զբաղեցնում էին այլազգի բնակիչներ: XIX դ. վերջից հայերենը նույնպես դուրս էր մղվում գործածությունից: Այն լսվում էր միայն եկեղեցիներում, այն էլ՝ գրարար: Առտնին խոսակցության ժամանակ հայերն օգտագործում էին հունգարերենը, որը և շատ շուտով դարձավ նրանց մեծ մասի միակ խոսակցական լեզուն, իսկ հայկական կենտրոններից դուրս ապրող հայերի մի մասը անգամ մոռացել էր իր հայկական ծագումը:

Հայերը, որոնցից շատերը անցած քաղաքական հեղաբեկումների օրերին կորցրել էին իրենց ունեցվածքը և հարկադրված էին գործունեության այլ ոլորտներ որոնել, գործուն մասնակցություն էին ցույց տալիս Հունգարիայի տնտեսական ու հոգևոր կյանքին, աստիճանաբար ավելի ու ավելի շոշափելի դիրք գրավելով հունգար մշակութային կյանքում: Սակայն XIX դ. վերջերին

Հունդարիայի հայկական բնակավայրերում (առաջին հերթին Սամոշույվար և Նդիսաբեթուպուլիս քաղաքներում) դեռևս պահպանվել էր հայ մտավորականության բավական լայն շրջան, որն առանձնապես սուր էր զգում մոտավորապես իրականության ծուլման վտանգն ու ջանում դրա առաջն առնել:

Հունդարահայ համայնքի պահպանման համար շարժումն սկսվեց Սամոշույվարում: Դրան մեծապես աջակցում էին Վիեննայի Մխիթարյանները, որոնց միաբանների մեջ քիչ չէին հունդարահայերը: Զարթոնքի այդ շարժումը համակրանք ու հետաքրքրություն առաջ բերեց նաև Հունդարիայի գրեթե արդեն ծուլված այն հայերի շրջանում, որոնք բնակվում էին Տրանսիլվանիայի հայությունից կտրված ու հեռու:

Նախ և առաջ հող տարվեց ընդարձակել ու զարգացնել «մայրաքաղաք» Սամոշույվարը, այն երկրի բարեկարգ ու բարգավաճ քաղաքներից մեկը դարձնելու համար: Մշակութային զարթոնքի նախանձախնդիր այդ մարդիկ մեծ ջանքեր թափեցին քաղաքի հին շենքերի վերանորոգման համար, առանձնապես նրանց, որոնց վրա նկատելի էր հայկական ճարտարապետության կնիքը կամ էլ ունեին հայերեն վիմագիր արձանագրություններ: Վերանորոգվեց հայոց հին եկեղեցին, գեղեցիկ ձևավորվեցին գլխավոր հրապարակն ու զբոսայգին, փոխվեցին փողոցների հին անունները, դրանք վերակոչվում Սամոշույվարում ծնված նշանավոր հունդարահայերի անուններով: Քաղաքապետարանի շենքում պահվում էին Արարատի համապատկերը և Հունդարիայի պետական խորհրդի բոլոր հայ պատգամավորների դիմանկարները:

Սամոշույվարը մշակութային առումով ավելի մեծ նշանակություն ուներ, քան Հունդարիայի գավառական խոշոր քաղաքներից շատերը: Այն հունգարահայության իսկական մշակութային կենտրոնն էր, հայության անհետացող հատվածի զարթոնքի գաղափարի արժարժման ու մի որոշ չափով էլ՝ իրականացման վայրը: Քաղաքն ուներ մի քանի դպրոց և պրոգիմնազիա: 1897 թ. սեպտեմբերից սկսեց գործել նաև գիմնազիան: Զնայած դասերն ավանդվում էին հունգարերեն, բայց, այնուամենայնիվ, Սամոշույվարի գիմնազիան ևս դարձավ զարթոնքի գաղափարի արժարժող:

Քաղաքի մշակութային կյանքում մեծ դեր էր խաղում նաև սիրողների թատերական խումբը, որի ներկայացումներին հաճախ մասնակցում էին հունգարական մշակույթի հանրահայտ դեմքերը: Հայտնի է, օրինակ, որ բանաստեղծ Դյուլա Ռուդնյանսկին (1858—1913) այստեղ կարդացել է հայ գրողներից կատարած իր թարգմանությունները (Ռ. Պատկանյանի «Աղասու մոր երգը», Ս. Շահազիզի «Գիշեր» ու «Երազ» բանաստեղծությունները): Սիրողների թատերական խումբը զեյթունցիների ապստամբությունից հետո, 1896 թ. մարտի 15-ին, ներկայացրեց Հունդարիայի պատմական անցյալից վերցված մի թատերգություն՝ «Դորո Կատիցա կամ էգերյան գեղեցիկ օրեր» խորագրով, որի թեման հունգար ժողովրդի պայքարն էր թուրք զավթիչների դեմ:

Սամոշույվարում գործում էր նաև տպարան, որը պատկանում էր էնդրե Թոդորանին: Այստեղ էր տպագրվում հունգարահայության զարթոնքի գաղափարը մարմնավորող «Armenia magyar—örmény haviszemle» («Արմենիա՝ հունգարա-հայկական ամսագիրը»): «Արմենիայի» առաջին համարը լույս տեսավ 1887 թ. հունվարին: Այն անընդմեջ հրատարակվեց ավելի քան քսան տարի: Նրա գլխավոր խմբագիրն էր Սամոշույվարի գիմնազիայի գրականու-

թյան դասատու Կրիշտոֆ Սոնկոդր (Խաչիկ Աստվածատրյան-Սոնկոդյան, 1843—1907), որը հունգարահայ մշակութային զարթոնքի ամենամեծ ջատագովն էր: Կ. Սոնկոդրի մահվանից հետո տեղի հայոց թանգարանի վարչությունը որոշեց շարունակել հանդեսի հրատարակությունը, բայց 1907 թ. կարողացավ լույս ընծայել միայն երեք համար, 1908—1912 թթ. ոչ մի, իսկ 1913 թ.՝ միայն մեկ համար<sup>3</sup>:

«Արմենիային» աշխատակցել են ավելի քան 150 հեղինակ, տպագրվել է 1829 հոգված, 2090 լուր, 396 նկար: «Արմենիան» իր առջև խնդիր էր դրել «հունգար հասարակայնությանը ներկայացնել հայկական մշակույթն իր բոլոր բնագավառներով... և դառնալ հունգար և հայ դրականություններն իրար հետ կապող օղակ»<sup>4</sup>: Այն նպատակ ուներ հրատարակել «ծավալուն հոգվածներ Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի և հունգարահայերի անցյալի ու ներկայի մասին... հայ դասական գրողներից կատարված թարգմանություններ, հաղորդումներ ու հրապարակումներ, հնագիտության, դրականության, բանաստեղծության տեսության, լեզվաբանության, մատենագիտության, եկեղեցու պատմության, ժողովրդական բանահյուսության, ծագումնաբանության և այլոց մասին»<sup>5</sup>:

«Արմենիան» անվարան կարելի է անվանել հունգարահայ մշակութային զարթոնքի հայելի, քանի որ ամսագիրը տեղ էր տալիս այն ամենին, ինչ կարող էր նպաստել այդ շարժմանը: Մասնավորապես իր ժողկման շրջանում (1890-ական թվականների կեսերին) հանդեսը բաժանորդներ ուներ Հունգարիայի 85 բնակավայրերում և արտասահմանյան շուրջ քսան քաղաքներում: Սերտ կապեր էին հաստատվել «Արմենիայի», «Մուրճ», «Հանդես ամսօրյա», «Արա» և այլ պարբերականների միջև:

Հունգարահայերին և, ընդհանրապես, հունգար հասարակայնությանը հայության անցյալի հետ ծանոթացնում էին խմբագիր Կ. Սոնկոդր, Հունգարիայի պետական խորհրդում Սամոռուլվարի պատգամավոր, հայագետ Անտալ Մոլնարը (1847—1902), Հակոբ Մարկոպիլը, Դյուլա Մերզան և այլք: Նրանք շատ լավ գիտեին իրենց մայրենին (հայերենը) և եվրոպական լեզուներ, ծանոթ էին հայ և օտար գիտնականների աշխատություններին, օգտագործում էին Անտուան Սեն-Մարտենի, Դյուլորիեի, Լանգլուայի, Շահան Զրպետի, Լեման-Հաուպտի, Խանիկովի, Քերովբե Պատկանյանի, Արշակ Զոպանյանի և այլոց աշխատությունները, ինչպես նաև եվրոպական ու հայ պարբերականներում տպագրված հետազոտությունները:

Նրանց հայագիտական հոգվածների նյութը հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության առանձին շրջանների անցքերն էին, պատմական նշանավոր դեմքերի կյանքն ու գործունեությունը, հայոց պետականության կառուցվածքի յուրահատկությունները և այլն: Ուշագրավ են Կ. Սոնկոդրի «Քրիստոնեության տարածումը Հայաստանում»<sup>6</sup>, Ա. Մոլնարի «Հին Հայաստանի

<sup>3</sup> Ս. Քոլանջյանի բանավոր հաղորդման համաձայն՝ 1912 թ. լույս է տեսել «Արմենիայի» մեկ համար՝ Մ. Պոտուրյանի խմբագրությամբ, որը, սակայն, մեզ մատչելի չի եղել:

<sup>4</sup> Govrik J. Gergely, Szongott Kristof, Eloffizetesi felhivas („Armenia“, 1887, № 1, o. 2).

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, 1894, № 6, էջ 169—171:

պետական ապարատը»<sup>7</sup>, Հ. Մարկովիչի «Տիգրան երկրորդ»<sup>8</sup>, «Խոսրով առաջին»<sup>9</sup> հոգվածները և այլն:

Հունգարահայ գաղութի պատմությունն ըստ էության անժանոթ էր ընթերցողներին: Անհրաժեշտ էր որոնել, գտնել և հանդեսի միջոցով շրջանառության մեջ դնել պետական և կրոնական հաստատությունների դիվաններում պահվող համապատասխան վավերագրերն ու ձեռագիր նյութերը, ապա նաև դրանց հիման վրա վերականգնել Տրանսիլվանիայի հայության անցյալը: Ինչպես «Արմենիայի» էջերում, այնպես էլ առանձին գրքերով հրապարակվում էին նման նյութեր: Դրանցից են Սամոշույվարի գիմնազիայի ուսուցիչ Ցանոշ Տեմեշվարու հետաքրքրական աշխատությունները հայոց դավանության վերաբերյալ՝ Հունգարիայում հաստատվելու սկզբնական շրջանում<sup>10</sup> և հայկական ժագումով հունգար ազնվական ընտանիքների մասին<sup>11</sup>, Կ. Սոնկոգի՝ «Հունգարահայ գերդաստանների ժագումնաբանությունը»<sup>12</sup> և Սամոշույվարին նվիրված մենագրությունները<sup>13</sup>, Եղիսաբեթուպոլսի ծխատեր քահանա Լ. Ավեդիկի (Ղուկաս Ավետիքյան) գիրքը իր ծննդավայրի պատմության վերաբերյալ<sup>14</sup> և այլն:

«Արմենիան» բազմաթիվ հոգվածներ էր նվիրում նաև հայոց լեզվի զանազան հարցերին և հունգարերենի հետ նրա փոխազդեցության խնդիրներին, որոնց նպատակը ընթերցողների և, առաջին հերթին, մայրենին մոռացած հայերի մեջ հետաքրքրություն արթնացնելն էր այն ամենի նկատմամբ, ինչ հայկական էր: Միաժամանակ ծանուցվում էր, որ Զիկսեպվիզի ծխատեր քահանա Շիմոն Ֆառաոն տպագրության էր պատրաստում հունգարերեն-հայերեն և հայերեն-հունգարերեն բառգրքերը, հայազգի հայագետ Անտալ Վոյտը (1877—1899) կազմել էր հայոց լեզվի տեսական ու գործնական մի քերականություն<sup>15</sup> (անտիպ), Լ. Ավեդիկն աշխատում էր «Հայոց լեզվի ընթերցարան հունգարների համար» ձեռնարկի վրա<sup>16</sup> և այլն:

Հունգարահայ հանդեսում տպագրվել են բազմաքանակ գեղարվեստական երկեր, որոնց հեղինակները հիշյալ գաղթօջախի գրասերներն էին: Դրանք հատկապես կարևոր են իբրև XIX դ. վերջի և XX դ. սկզբների հունգարահայերի սոցիալ-տնտեսական ու հասարակական իրավիճակի արտահայտություններ և պատմում են հայերի կյանքի ու կենցաղի, ինչքի, հետաքրքրու-

<sup>7</sup> Նույն տեղում, 1896, № 1, էջ 2—6, № 2, էջ 41—46, № 3, էջ 72—76, № 4, էջ 104—109:

<sup>8</sup> Նույն տեղում, 1895, № 5, էջ 149—155:

<sup>9</sup> Նույն տեղում, № 7, էջ 221—223, № 8, էջ 241—252:

<sup>10</sup> Temesváry János, Miben állott őseinknek eretneksege („Armenia“, 1890, № 2, o. 51—53).

<sup>11</sup> Temesváry János, A magyar—örmény nemes családok czimerlevelei („Armenia“, 1893, № 12, 1896, № 4).

<sup>12</sup> Szongott Kristóf, A magyarhoni örmény családok GENEALOGIAJA („Armenia“, 1897, № 8, 1898, № 11).

<sup>13</sup> Szongott Kristóf, Szamosújvár város MONOGRÁFIAJA I—III. Szamosújvár, 1898—1901.

<sup>14</sup> Ávedik Lukács, Szabad kir. Erzsébetváros képviselőtestületének kegydíjuri jogai és kötelemei („Armenia“, 1903, № 11, o. 326—338).

<sup>15</sup> Voith Antal, Előszó („Armenia“, 1897, № 10, o. 304—306).

<sup>16</sup> Ávedik Lukács, Örmény olvasókönyv magyarok számára („Armenia“, 1890, № 1, o. 26—27).

թյան շրջանակների, դադութն հուզող հիմնական խնդիրների և այլնի մասին: «Արմենիայում» լույս տեսած բանաստեղծությունների մեծ մասի նյութը հայ ժողովրդի պատմական անցյալն է: Այս առումով ուշագրավ են Յակոբ Գոպալյի «Անահիտի տոհմն» բանաստեղծությունը (1890), Դավիդ Մարտոնի «Արա Գեղեցիկ» չափածո ողբերգությունը (1897): Մի շարք բանաստեղծություններ էլ նվիրված էին Հայաստանի և հունգարահայության ճակատագրին: Դրանցից լավագույններն են Իմրե Միհայֆու «Պանդուխտը» (1898), «Բագրատունյաց գուստրը» (1905), «Ալմիրա» (1897), Գերգեյ Էստեգարի «Աքսորյալը», «Երազ տեսա» (1895), Ռոզա Շալլակի «Ավանդություն հայ գեղուհու մասին» (1895) և Գերգեյ Շիմայի «Նոր Հայաստանը» (1895), Գերե Ֆեյերի «Հիշում եմ» (1895), Լասլո Էստեգարի «Վերջին հայը» (1894) և այլ բանաստեղծություններ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև այն պատմվածքներն ու ակնարկները, որոնց թեման Տրանսիլվանիայի հայության առօրյան էր: Դրանցից են Տիվադար Տերեշի «Ասվադուրը» (1891), Կլարա Կրիտլայի «Անեծքը» (1890), «Գեղեցիկուհի Ռոմանն» (1890), «Եվ այս, և այն վնասակար չեն» (1892), Իլոնա Հարմաաի «Հիշողություններ համբարձման օրերիցը» (1893) և այլն:

«Արմենիայի» ընթերցողները բազմաթիվ թարգմանությունների և հոդվածների շնորհիվ հնարավորություն ունեին ծանոթանալու նաև բուն հայ գրականության հետ: Այդ ասպարեզում մեծ ջանքեր է թափել Հունգարիայի պետական խորհրդի նախկին պատգամավոր Գերգեյ Շիմային՝ պարբերաբար թարգմանելով ու հրատարակելով Դ. Ալիշանի, Մ. Պեշիկթաշլյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Բաֆֆու, Հ. Հովհաննիսյանի, Ա. Մատուրյանի ստեղծագործություններից: Գ. Շիմային գործակցում էին նաև հայազգի գրականագետ Լ. Էստեգարը և հունգար բանաստեղծ Դյուլա Ռուդոլֆանսկին:

Հայ մի շարք պատմիչների, գրողների ու հրապարակախոսների էլ (Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Եղիշե, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Նարեկացի, Մխիթար Գոշ, Սայաթ-Նովա, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Պ. Պոռշյան, Գ. Արծրունի և ուրիշներ) «Արմենիան» իր ընթերցողներին էր ներկայացնում առանձին բնութագրական հոդվածների միջոցով: Շատ է գրվել մասնավորապես Մովսես Խորենացու մասին, որի «Հայոց պատմության» հունգարերեն լիակատար թարգմանությունը (հրատարակիչ՝ Կ. Սոնկոդ) լույս տեսավ 1892 թ.<sup>17</sup>:

Հունգարահայ մշակութային զարթոնքի եռանդուն գործիչների ուշադրությունից չէր վրիպում նաև իրենց գաղթավայրի հայության բանավոր ստեղծագործության և նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը: 1887 թ. սկսեց հրատարակվել «Ethnologische Mitteilungen aus Ungarn» («Ազգագրական տեղեկություններ Հունգարիայից») ամսագիրը, որի խմբագիրն էր ազգագրագետ Անտալ Հերմանը (1851—1926): Այն ուներ նաև հավելված՝ «Armenische Beiträge» («Հայկական զեկույցներ»), որ պարբերաբար լույս էր տեսնում Ա. Հերմանի և հայագետ Լուկաշ Պատրուբանի (Դուկաս Բադրուպանյան, 1861—1926) խմբագրությամբ:

<sup>17</sup> Այս հրատարակությունը դրական գնահատեցին հունգարական մի շարք պարբերականներ՝ «Ֆեկարոշի Լապոկ», «Կուլտուրա», «Սագադոկ» («A magyar Chörenei») «Armenia», 1895, № 2, օ. 61—62).

1903 թ. լույս տեսավ Կ. Սոնկոդի «Հունգարահայ ազգագրությունը»<sup>18</sup>, որտեղ նկարագրված են հայերի և հունգարահայության ծագումը, հնօրյա մշակույթը, մարդաբանական առանձնահատկությունները, տարազը, ապրելակերպը: Գրքի վերջին շորս գլուխները նվիրված են հունգարահայերի ժողովրդական բանահյուսությանը, ուր կան նմուշներ Տրանսիլվանիայի հայոց բանավոր երգերից, հեքիաթներից, առածներից, երգիծապատումներից և այլն: Այսպիսով, Կ. Սոնկոդի շնորհիվ կորստից ընդմիշտ փրկվեցին հունգարահայոց բանահյուսության այդ մեծարժեք հուշարձանները, որոնց մի մասը բերված է հունգարերեն թարգմանությամբ, իսկ մյուսներն ունեն զուգահեռ հայերեն բնագրեր՝ լատինական տառադարձությամբ:

Ժամանակակիցները շատ բարձր գնահատեցին Կ. Սոնկոդի «Ազգագրությունը»: Ա. Հերմանը դրեց. «Այդ գիրքը պետք է պահվի յուրաքանչյուր հայ կրթված ընտանիքի գրադարակի առաջին շարքում... պետք է դառնա Տրանսիլվանիայի հայության ավետարանը»<sup>19</sup>:

1903 թ. լույս տեսավ նաև հունգարահայ նշանավոր գրող Էլեմեր Բանյայի կազմած «Հայկական երգիծապատում»<sup>20</sup> եռահատոր ժողովածուն, որը նույնպես ջերմ ընդունելություն գտավ:

Հունգարահայության զարթոնքի շոշափելի արդյունքներից մեկն էլ հայկական թանգարանն էր, որի հիմնադրման գործում մեծ դեր է խաղացել Ա. Հերմանը: 1905 թ. ստեղծվեց «Հայկական թանգարանային ընկերությունը», որի նախագահ դարձավ Կ. Սոնկոդը: Այն գործեց մինչև թանգարանի պաշտոնական բացումը, որ տեղի ունեցավ Կ. Սոնկոդի մահվանից հետո՝ 1909 թ.:

Թանգարանում ցուցադրվում էին հին անոթներ ու զգեստներ, կնիքներ, դրոշակներ, Սամոշուլարի դատարանի արձանագրությունների մատյաններ, առանձին արհեստավորական ընկերությունների կանոնադրություններ, հին ու արժեքավոր ձեռագրեր, գորգեր, գեղեցիկ մանվածքներ, դրամներ և այլն:

Հունգարահայության մշակութային զարթոնքը, սակայն, ի վիճակի չեղավ լուծելու իր առջև ծառացած բոլոր հարցերը: Չնայած թափված ջանքերին, հունգարահայերը մշակութային ասպարեզում ինքնավարություն չստացան, մինչդեռ զաղութի պահպանության և համախմբման համար դա խիստ կարևոր նշանակություն կունենար:

0. Վրզարյանի մահվանից հետո (1715) Մարիա-Թերեզա կայսրուհին հայոց եպիսկոպոս նշանակեց Սամոշուլարի եկեղեցու ավագ քահանա Միխայ Թեոդորովիչին (Մինաս Թորոսյան), բայց Վատիկանը չվավերացրեց այդ նշանակումը, և հայերն անցան Տրանսիլվանիայի կաթոլիկ եպիսկոպոսի գերիշխանության տակ: Ինքնուրույն եպիսկոպոսություն հիմնելու համար հունգարահայերի ձեռնարկած հետագա փորձերը որևէ արդյունքի չհանգեցրին: Թեև կրոնական, բայց այդ հաստատության վերացումը առավել արագացրեց ձուլման ընթացքը: Զարթոնքի գաղափարներն արժարժողները հասկանում էին, որ հայերի համար կարևոր խնդիր էր ինքնուրույն եպիսկոպո-

<sup>18</sup> Szongott Kristóf, A magyarországi ormenyek ethnographiaja Szamosújvár, 1903.

<sup>19</sup> Herrmann Antal, Az erdélyi örmények monografiaja. („Armenta“, 1904. № 6, o. 169).

<sup>20</sup> Banyai Elemer, Örmény anekdoták I—III. Szamosújvár, 1903.

սության վերականգնումը, բայց «Արմենիայում» և Հունգարիայի ուրիշ շատ պարբերականներում տպագրված համապատասխան հոդվածները, հունգարահայերի կրակոտ քերթվածներն անկարող եղան որևէ բան անել:

Հունգարահայ մշակութային զարթոնքի անդադրուն գործիչները ուրիշ ծրագրեր էլ ունեին: Կ. Սոնկոդը, օրինակ, ուզում էր մի ամսագիր էլ հրատարակել հայոց լեզվով, «Հունգարիա» անունով, նպատակ ունենալով ավելի սերտ կապեր ստեղծել հունգարահայության և Հայաստանի միջև: Սամոշույվարի մտավորականները գտնում էին, որ իրենց քաղաքը աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ հաջողությամբ կարող է իրար միացնել Արևմուտքն ու Արևելքը, Եվրոպայի և մայր հայրենիքի հայությունը, դառնալ մշակութային այնպիսի կենտրոն, ինչպիսին Վենետիկն էր: Օրինակ, Ա. Հերմանը հանդես եկավ մի հոդվածով<sup>21</sup>, որով աշխատում էր հիմնավորել Վիեննայի Մխիթարյան միաբանությունը Սամոշույվար փոխադրելու նպատակահարմարությունը: Նրա կարծիքով՝ Եվրոպայի հայությունից մեկուսացված Մխիթարյանները դրանով միայն կշահեն, իրենց հերթին հնարավորություն տալով հունգարահայոց «մայրաքաղաքին» դառնալու հայ մշակույթի ու գիտության հեղինակավոր կենտրոն: Ավելի վաղ, դեռ 1869 թ., Դյուլաֆհերվար (այժմ՝ Ալբա Յուրիա) քաղաքի կաթոլիկական գիմնազիայի տեսուչ Յակար Ավեդը (Հակոբ Ավետիքյան), հունգարահայ պատանեկության համար փոխադրելով նոյմանի հայ գրականության պատմության ձեռնարկը, առաջաբանում ուրվագծում էր այն ապագան, որ վիճակվելու էր հայոց «մայրաքաղաքին»:

«Սամոշույվարի ամենագեղեցիկ հրապարակի վրա, հայոց արքեպիսկոպոսի պալատից ոչ շատ հեռու, վեր է խոյանում գիտությունների հայոց կաճառը, ուր, իբրև կենտրոնի, մեր ազգային լեզուն ու գրականությունն ուսումնասիրելու և զարգացնելու համար, աշխարհի բոլոր ծայրերից հավաքվելու են գիտնականներ: Հենց այստեղ էլ քննարկվում են հայ գիտնականների աշխատությունները և երիտասարդ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործությունները: Ինչպես է հրճվում հոգիս, երբ տեսնում եմ, որ թեպետ մենք ապրում ենք սփռված ամբողջ աշխարհում, բայց հոգով միասին ենք, բոլորիս ոգևորում են միևնույն գաղափարն ու նպատակը: Հայոց գիտության այս կաճառից քիչ այն կողմ գտնվում է հայ ազգային համալսարանը, ուր ուսումնաժարավ հայ երիտասարդությունը կրթությունից բացի ստանում է նաև իսկական ազգային դաստիարակություն»<sup>22</sup>:

Հունգարահայության լավագույն ներկայացուցիչների այս գեղեցիկ երազանքները՝ Տրանսիլվանիայի գաղութը հայության գոյատևման ու բարգավաճման կենտրոն դարձնելու մասին մնացին անիրագործելի: Զարթոնքին հաջորդեց գաղթօջախի անկումը: Սահմանափակ թվով մարդկանց գործունեության արդյունք լինելով հանդերձ՝ հունգարահայ մշակութային այս զարթոնքը ժամանակակիցների շրջանում առաջ բերեց համընդհանուր ոգևորություն ու հետաքրքրություն: Անսովոր էին այդ մարդկանց եռանդն ու աշխատասիրությունը: Խանդավառված հայրենասիրության և ընդհանուր մարդասիրության վեհ գաղափարներով՝ նրանք իբրև անհատներ չէին կարող մշակութային զարթոնքի գործը հասցնել մինչև հաղթական ավարտ:

<sup>21</sup> Herrmann Antal, Mechitaristák Szamosújvárt („Armenia“, 1905, № 7, o. 225—228).

<sup>22</sup> „Armenia“, 1898, № 2, o. 62.

Խնդիրն այն է, որ Հունգարահայ մշակութային զարթոնքն անկարող եղավ իր ոլորտի մեջ առնել Հունգարիայում ապրող բոլոր հայերին: Հայազգի մտավորականության մեծ մասն այնքան էր խորթացել սեփական ազգությունից, որ ի վիճակի չէր մասնակցություն բերել այդ գործում: «Արմենիայի» էջերում տպագրված երկերի մեծ մասը գրասերների մտքի արգասիքն էր, մինչդեռ այն ժամանակների հայկական ծագմամբ նշանավոր հունգար գրողներ՝ Գերգել Զիկին (1875—1915), Իշտվան Պետելեին (1852—1910) և ուրիշներ չէին աշխատակցում նրան: Այս գրողներն այնքան էին կտրված Հունգարահայ առօրյայից, որ նրանց գեղարվեստական հույզերի համար չէին կարող նյութ դառնալ հայերին հուզող հոգսերն ու ցավերը: Նրանցից ոմանք աշխատակցելու խոստումներ տալիս էին, ոմանք էլ գիտեին հայերեն ու կենցաղում էլ հետևում էին հայկական ավանդներին, բայց տված խոստումը հետաձգում էին ու մոռանում:

Այնուամենայնիվ Հունգարահայ մշակութային զարթոնքը խոր հետքեր թողեց: Նրա նշանակությունը զգալի է այն առումով, որ մեծ ջանքեր էին թափվում փրկելու արդեն փոշիացող դաղթօջախը և Հունգարիայի հայության ազգային նկարագիրը: Շնորհիվ այդ շարժման թեև չկանխվեց, բայց դանդաղեցվեց ընդհանուր ձուլումը: Այն կյանքի կոչեց գրական-մշակութային հսկայական ժառանգություն, որ հայության ընդհանուր մշակույթի անբաժանելի մասն է:

## ПРОБУЖДЕНИЕ КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ ВЕНГЕРСКИХ АРМЯН В КОНЦЕ XIX—НАЧАЛЕ XX вв.

ЭВА ГЕВОРКЯН

### Резюме

Массовое переселение армян в Венгрию произошло в 1672 г. В течение двух веков армянские поселения претерпели существенные социально-экономические изменения, армяне фактически ассимилировались. В конце XIX—начале XX вв. происходит пробуждение культурной жизни венгерских армян на территории Трансильвании. Здесь издается журнал «Армения» на венгерском языке (1887—1907), редактором которого был Криштоф Сонгот (Хачик Аствацатрян). В г. Самошуйвар (Герла) были открыты гимназия (1896) и Армянский музей (1909).